

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 14.04.2022 թ. կայացած թիվ 09.21-22 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 30-ը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի որոշ ամբիոնների միավորում:
2. ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի 326 լսարանը ակադեմիկոս Էդվարդ Չուբարյանի անվան անվանակոչում:

Լսեցին՝ ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի որոշ ամբիոնների միավորման հարցը:

Ելույթ ունեցավ՝ ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը: Նա ներկայացրեց Ընդհանուր ֆիզիկայի և Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնների համատեղ նիստի միավորման վերաբերյալ որոշումը: Առաջարկվել էր նաև անվանել նորաստեղծ ամբիոնը Վ. Համբարձումյանի անվան ընդհանուր, կենսաֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոն:

Առաջարկը դրվեց քվեարկության և ընդունվեց 28 կողմ 2 ձեռնպահ ձայներով:

Որոշեցին՝ Միավորել Ընդհանուր ֆիզիկայի և Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնները: Նորաստեղծ ամբիոնը անվանել Վ. Համբարձումյանի անվան ընդհանուր, կենսաֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոն:

Լսեցին՝ ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի 326 լսարանը ակադեմիկոս Էդվարդ Չուբարյանի անվան կոչելու հարցը:

Ելույթ ունեցավ՝ Տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ Ա. Սահարյանը: Նա ներկայացրեց Տեսական ֆիզիկայի ամբիոնի առաջարկը՝ անվանակոչել ֆակուլտետի 326 լսարանը ակադեմիկոս Է. Չուբարյանի անունով:

Առաջարկը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Որոշեցին՝ Անվանակոչել ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի 326 լսարանը ակադեմիկոս
Էդվարդ Չուբարյանի անունով:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝



Ռ.Ս. Հակոբյան

Գիտական խորհրդի քարտուղար՝



Գ.Հ. Հովհաննիսյան